ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՍՏՂԻԿ ԳԱՎՐՈՒՇԻ

ԴԻՍԼԵՔՍԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

ԺԳ .00.03 - «Հատուկ մանկավարժություն» մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Գ.Ռ. Հովյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր պրոֆեսոր՝ Ռ.Ն.Ազարյան

մանկավարժական գիտությունների թեկնածու, Ն.Ա.Ներկարարյան

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրիի Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ.փետրվարի 28-ին ժամը14^{oo}-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք.Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. հունվարի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ա.Վ. Ավագյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ նոր օրենքի (14.04.1999թ.), Հայաստանի Հանրապետությունում 2006-2007թ.թ. ուս.տարուց իրականացվում է տասներկուամյա միջնակարգ կրթություն՝ եռաստիճան համակարգով, ըստ որի՝ «Ուսումնական հաստատություններ են ընդունվում այն երեխաները, որոնց վեց տարին լրանում է մինչև դեկտեմբերի 31 -ը ներառյալ»:

Ուսումնական գործընթացը նման երեխաների համար բավականին նոր և բարդ իրավիճակ է՝ կապված նրանց առաջատար տարիքային գործունեության փոփոխության հետ, որի հաղթահարման համար պահանջվում է հոգեկան մի շարք գործառույթների բավարար զարգացում: Հանրակրթական հաստատություններին ներկայացվող պահանջները թելադրում են գիտականորեն հիմնավորված՝ ուսուցման և գնահատման նոր մեթոդների ստեղծման անհրաժեշտություն, որոնք ուղղված կլինեն սովորողների ուսուցման նպատակաուղղվածությանը, ինչպես նաև՝ խոսքային տարբեր խնդիրների վաղ հայտնաբերմանն ու կանխարգելմանը:

Ընթերցանության հմտությունը մեծ դեր է խաղում մարդու կյանքում, հոգեկան զարգացման և անձի ձևավորման գործում և ապահովում է ուսումնական գործունեությունը, գիտելիքների լիարժեք յուրացումը (Ռ.Բեկկեր, Լ.Ս.Վիգոտսկի, Տ.Գ.Եգորով): Երեխաների ընթերցանության յուրահատուկ խանգարումների խնդիրը ժամանակակից լոգոպեդիայում արդիական է: Մինչև այժմ ընթերցանության վերոհիշյալ խանգարումների առաջացման մեխանիզմներն անբավարար են ուսումնասիրված, սակայն կան շատ տեսակետներ այն մասին, որ դիսլեքսիան ընթերցանության գործընթացի կայացումն ապահովող բանավոր խոսքի և ոչ խոսքային հոգեկան գործընթացների ֆունկցիոնալ հիմքի անբավարար ձևավորվածության հետևանք է: Ըստ մի շարք հետազոտողների՝ տարրական դասարաններում սովորող երեխաների 3-10%-ը ունի դիսլեքսիա (Ռ.Բեկկեր, Ա. Ն.Կորնև):

Կրտսեր դպրոցականների ընթերցանության խանգարումների մեծ հաճախականությունն ավելի արդիական է դարձնում նախադպրոցական տարիքի երեխաների դիսլեքսիայի կանխարգելման խնդիրը (Ա.Ն.Կորնև, Ռ.Ի.Լալաևա, Գ.Ռ.Հովյան, Զ.Հ.Զոհրաբյան, Ա.Լ.Վարդանյան):

Նման խնդրի լուծման համար անհրաժեշտ է մշակել նախադպրոցականների հետազոտման հատուկ համակարգային ծրագրեր, որոնք ուղղված կլինեն դիսլեքսիայի կանխարգելմանը: Ըստ ընթերցանության խանգարման ժամանակակից հետազոտությունների՝ դիսլեքսիան ընթերցանության գործընթացի ֆունկցիոնալ հիմքի կայացումն ապահովող խոսքային և ոչ խոսքային բարձրագույն հոգեկան գործընթացների անբավարար

ձևավորվածությունն է (Ա.Ն.Կորնև, Գ.Ա.Կաշե, Ռ.Ե.Լևինա):

Դիսլեքսիայի շտկման մեթոդիկաների համակարգվածությունը պետք է պայմանավորված լինի ընթերցանության գործընթացի ունակության ձևավորման հիմքում ընկած բանավոր խոսքի և ոչ խոսքային հոգեկան գործընթացների ուսումնասիրության ներառմամբ: Երեխայի հոգեկան զարգացման առանձին ցուցանիշների ձևավորվածության մասին եղած տեղեկությունները, որպես կանոն, թույլ չեն տալիս հավաստիորեն գնահատել ընթերցանության ֆունկցիոնալ բազիսը: Միաժամանակ, նախադպրոցականների նշված գործառույթների ձևավորվածության մակարդակի համակարգային ուսումնասիրությունը կօգնի բացահայտել դիսլեքսիայի առաջացման ռիսկի խումբը և հիմնավոր օգտագործել բոլոր մեթոդները՝ յուրաքանչյուր երեխային օգնություն ցուցաբերելու և դիսլեքսիան կանխարգելելու (Ա.Ն.Կորնև, Ռ.Ի.Լալաևա, Ի.Ն.Սադովնիկովա):

Այսպիսով, նախադպրոցական և դպրոցական հաստատությունների արդի պահանջները թելադրում են գիտականորեն հիմնավորված համակարգային գնահատման մեթոդիկաների ստեղծման անհրաժեշտություն, որոնք ուղղված կլինեն դիսլեքսիայի վաղ հայտնաբերմանն ու կանխարգելմանը: Մինչև այժմ, գործնականում նման մեթոդիկաներ չեն կիրառվել: Տվյալ հակասությունն էլ որոշեց հետազոտության անհրաժեշտությունը. ի՞նչպես կարելի է կանխարգելել դիսլեքսիան մինչև գրաճանաչությունը, ընթերցել սովորելը: Այս խնդրի լուծմանն է ուղղված մեր հետազոտությունը:

<u>Հետազոտության նպատակը</u> նախադպրոցական տարիքի երեխաների դիսլեքսիայի կանխարգելմանն ուղղված գիտականորեն հիմնավորված համակարգային մեթոդիկայի ստեղծումն է:

<u>Հետազոտության օբյեկտը</u> նախադպրոցական տարիքի երեխաների խոսքի զարգացման առանձնահատկությունների բացահայտման միջոցով դիսլեքսիայի կանխարգելման գործընթացն է:

<u>Հետազոտության առարկան</u> դիսլեքսիայի կանխարգելմանն ուղղված մեթոդական համակարգն է:

<u>Հետազոտության գիտական վարկածը</u> նախադպրոցականների բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և մի շարք ոչ խոսքային հոգեկան գործընթացների, համակարգային հետազոտման ճանապարհով դիսլեքսիայի կանխարգելմանն ուղղված համակարգային մեթոդիկայի անհրաժեշտությունն է:

<u>Հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան և</u> աշխատանքային **<u>վարկածը</u>** պայմանավորում են հետևյալ **<u>խնդիրները</u>**.

1. Ուսումնասիրել դիսլեքսիայի առաջացման ռիսկի խմբին պատկանող նախադպրոցականների բանավոր խոսքը, խոսքալսողական հիշողությունը և ոչ խոսքային հոգեկան գործընթացները:

2. Վերլուծել բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացներիհամահարաբերակցումը՝ ըստ

կարդալու հմտության ձևավորվածության աստիճանի:

3. Մշակել նախադպրոցական տարիքի երեխաների դիսլեքսիայի կանխարգելման, բանավոր խոսքի, խոսքալսողական հիողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացների ուսումնասիրությանն ուղղված գիտականորեն հիմնավորված համակարգային մեթոդիկա:

<u>Հետազոտության մեթոդաբնական հիմքն են կազմում</u> խոսքային գործունեության՝ որպես բարդ համակարգային ֆունկցիոնալ միավորի և հաղորդակցման ու ճանաչողության կարևորագույն միջոցի, փիլիսոփայության ու հոգեբանության (Լ.Ս.Վիգոտսկի, Ն.Ի.Ժինկին, Ա.Ն.Լեոնտև, Ա.Ռ.Լուրիա, Ա.Ս.Սոկոլով) հիմնարար գիտատեսական, նյարդաֆիզիոլոգիական և նյարդահոգեբանական դրույթները (Պ.Կ.Անոխին, Լ.Ս.Վիգոտսկի, Ա.Ռ.Լուրիա) խոսքային և հոգեկան զարգացման միասնականության ուսումնասիրմանն ուղղված համակարգային մոտեցումը, ընդհանուր և հատուկ հոգեբանության, մանկավարժության սկզբունքները (Պ.Պ.Բլոնսկի, Լ.Ս.Վիգոտսկի, Ա.Վ.Զապորոժեց, Ա.Ն.Լեոնտև, Ս.Լ.Ռուբիյնշտեյն):

<u>Հետազոտության մեթոդները.</u>

1. Բժշկական, նյարդահոգեբանական, հոգելեզվաբանական, հոգեբանական և հատուկ մանկավարժական գրականության գիտատեսական վերլուծություն:

2. Մանկավարժական և բժշկական փաստաթղթերի հետազոտություն:

3. Թեստավորումը ներառող փորձարարական մեթոդ, ընդհանրացնող հոգեբանամանկավարժական գիտափորձ, ստացված արդյունքները ընդհանրացնող որակական և վիճակագրական մշակման մաթեմատիկական մեթոդներ (Գ.Ն.Ալեքսանդրով, Ա.Յ.Բելագուրով):

<u>Հետազոտության գիտական նորույթը.</u>

1. Գիտականորեն հիմնավորված է նախադպրոցականների դիսլեքսիայի կանխարգելման խնդրի համակարգային մոտեցումը:

2. Բացահայտված և ապացուցված է ընթերցանության հմտության կայացման, բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացների զարգացման մակարդակի համահարաբերակցական կապը:

3. Հայտնաբերված և ներկայացված են նախադպրոցականների ընթերցանության գործընթացի հիմքում ընկած բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացների ձևավորման տարբերակող առանձնահատկությունները:

4. Մշակված և ներկայացված է ընթերցանության ֆունկցիոնալ հիմքի ձևավորվածության աստիճանը որոշող նախադպրոցականների բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացների

զարգացման մակարդակի գնահատման բալային համակարգ:

Հետազոտության տեսական նշանակությունը նախադպրոցականների դիսլեքսիայի կանխարգելումն է՝ ընթերցանության գործընթացի ձևավորման առանձնահատկությունների ժամանակակից մոտեցումներին համապատասխան, դիսլեքսիայի պաթոգենետիկ մեխանիզմների վերաբերյալ տեսական պատկերացումների այնպիսի ընդլայնումը, ինչը հնարավորություն կտա մշակել ընթերցանության խանգարումների շտկման, կանխարգելման և գնահատման առավել արդյունավետ ուղիներ:

Հետազոտության գործնական նշանակությունը նախադպրոցականների բանավոր խոսքի և ոչ խոսքային հոգեկան գործընթացների հետազոտության մեթոդների մոդիֆիկացումն ու փորձարկումն է, ինչը պայմանավորում է դրանց կիրառման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև՝ համակարգային գնահատող մեթոդիկայի հիմնավորումն ու մշակումը, որն ուղղված է նախադպրոցականների դիսլեքսիայի կանխարգելմանը:

Հետազոտության նյութերը, դիսլեքսիայի հայտնաբերման և կանխարգելման նպատակով, կարող են օգտագործվել նախադպրոցական և դպրոցական հաստատությունների լոգոպեդների, ինչպես նաև՝ մանկավարժական բուհերում սովորող ուսանողների ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքում, լոգոպեդների որակավորման բարձրացման համակարգում, գիտական այնպիսի հետազոտություններում, որոնք ուղղված կլինեն նախադպրոցականների և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների խոսքային խանգարումների ուսումնասիրմանը, կանխարգելմանն ու շտկմանը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են.

1. Նախադպրոցականների դիսլեքսիայի բացահայտման համար անհրաժեշտ է իրականացնել ընթերցանության հմտության կայացման հիմքում ընկած բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության, ոչ խոսքային հոգեկան գործընթացների համակարգային հետազոտություն:
2. Ընթերցանության հմտության ձևավորումն ապահովող բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացների համակարգային խանգարումը համահարաբերակցում է դիսլեքսիայի առաջացումը, իսկ այդ նույն գործընթացների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս պարզել ընթերցանության ֆունկցիոնալ հիմքի ձևավորվածության աստիճանը:
3. Նախադպրոցականների բանավոր խոսքի և ոչ խոսքային հոգեկան գործընթացների զարգացման մակարդակի ուսումնասիրմանն ուղղված հատուկ մշակված համակարգային մեթոդիկան հնարավորություն է ստեղծում կանխարգելել դիսլեքսիան տարիքային այս փուլում:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորումը ապահովվում է տարբեր բնագավառների գիտական

նվաճումների վրա հիմնված մեթոդոլոգիական մոտեցմամբ, հետազոտության խնդիրների և ուսումնասիրվող խնդիրների բնույթին համապատասխան համակարգային մեթոդների ռեալիզացմամբ, վիճակագրական ժամանակակից մեթոդների կիրառմամբ, ստացված որակական և քանակական արդյունքների ներդրմամբ:

Հետազոտության փորձաքննությունն ու արդյունքների ներդրումը:

Հետազոտության արդյունքները քննարկվել և զեկուցվել են Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 2006-2012թ.թ. գիտաժողովներում, ինչպես նաև՝ հատուկ մանկավարժության ամբիոնի կողմից պարբերաբար կազմակերպված առաջավոր փորձը լուսաբանող գիտագործնական ամենամսյա, տարեկան սեմինարների և հաշվետվությունների ժամանակ:

Հետազոտության նյութերը կիրառվել են Հատուկ կրթության ֆակուլտետի լոգոպեդիայի բաժնի ուսանողների ուսումնական գործընթացում՝ մանկավարժական պրակտիկան կազմակերպելիս:

Նախադպրոցականների դիսլեքսիայի կանխարգելմանն ուղղված հետազոտության համակարգային մեթոդիկան կիրառվել և ներդրվել է Երևանի թիվ 166, 278 մանկապարտեզների և թիվ 109, 138, 155 հանրակրթական դպրոցների լոգոպեդական աշխատանքներում:

Ատենախոսության թեմայով հրատարակվել է 8 հոդված:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը շարադրված է 140 համակարգչային տեքստով: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից և մանկավարժական պրակտիկայում արդյունքների ներդրման ակտերից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը,

ներկայացված են ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, նպատակը, հետազոտության վարկածը, խնդիրները, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ձևակերպված են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

<u>Առաջին գլխում</u> «Բանավոր խոսքի խանգարումների ուսումնասիրման գիտական վերլուծությունը ժամանակակից լոգոպեդիայում» հանգամանորեն ներկայացված է դիսլեքսիայի վերաբերյալ գիտական հետազոտությունների մեկնաբանումը, որը ներառում է ընթերցանության գործընթացի հոգեֆիզիոլոգիական մեխանիզմների և ախտանիշների գիտատեսական վերլուծությունը և, իհարկե, նախադպրոցականների դիսլեքսիայի նախատրամադրվածության բացահայտումը: Հատուկ գրականության տվյալները վկայում են, որ ընթերցանության գործընթացի հոգեֆիզիոլոգիական կառուցվածքը տեխնիկական և իմաստային կողմերի սերտ համագործակցությունն է (Բ.Գ.Անանև, Ա.Ռ.Լուրիա, Ա.Ն.Սոկոլով, Դ.Ի.Էլկոնին):

Երեխաների ընթերցանության հմտության կայացումը բավականին խորը ուսումնասիրված և լուսաբանված է հայրենական, ռուսական և արտասահմանյան հետազոտողների կողմից: Տվյալ հմտությունն, իր ձևավորման ժամանակ, անցնում է մի շարք առանձնահատուկ փուլեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր խնդիրները և հնարները: Ընթերցանության հմտության ձևավորման բոլոր աստիճաններն սերտորեն կապված են միմյանց հետ, ընդ որում, ամեն հաջորդ աստիճան ձևավորվում է նախորդ աստիճանում, իսկ ամեն նախորդ աստիճան կազմում է հաջորդի բովանդակությունը:

Ինչպես հայտնի է, դիսլեքսիան ընթերցանության գործընթացի մասնակի յուրահատուկ խանգարում է, որը պայմանավորված է բարձրագույն հոգեկան ֆունկցիաների թերի ձևավորմամբ և արտահայտվում է կայուն բնույթի կրկնվող սխալներով: Վերջին տարիների հետազոտությունները ցույց են տալիս կարդալու գործընթացի խաթարման ամուր կապը ոչ միայն խոսքային խանգարումների, այլև այնպիսի հոգեկան գործընթացների թերի ձևավորվածության հետ, ինչպիսիք են՝ մտածողությունը, հիշողությունը, տեսողատարածական պատկերացումները, տեսաշարժողական հմտությունները:

Ներկայումս, մասնագիտական գրականության մեջ շատ է քննարկվում երեխաների ավելի վաղ տարիքում կարդալու ուսուցման հարցը: Սակայն գրաճանաչությունը երեխայի համար նշանակալի իրադարձություն է այն առումով, որ փոխվում է նրա տարիքային առաջատար գործունեությունը և, տառաճանաչ դառնալով, երեխան յուրացնում է բանավոր խոսքում արտաբերվող ամեն մի հնչյուն, որը գրավորում ունի իր գրաֆիկական պատկերը՝ տառը՝ գրաֆեման:

Ըստ P.Gardner-ի, B.Hornsby-ի 5-6 տարեկանում երեխան չի կարող գնահատվել որպես դիսլեքսիկ, բայց կարելի է խոսել այն «ռիսկի խմբի» մասին,

որի համակազմի սովորողները հակվածություն ունեն կարդալու գործընթացի յուրահատուկ խաթարման:
Քանի որ «Հանրակրթության մասին» ՀՀ նոր օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է տասներկուամյա միջնակարգ կրթություն՝ եռաստիճան համակարգով, ուսումնական հաստատություններ են ընդունվում այն երեխաները, որոնց 6 տարին դեռևս լրացած չէ, իսկ գրաճանաչության ուսուցման նախապատրաստումն իրականանում է մինչև 7 տարեկան հասակը, որը զգալի խնդիրներ է առաջացնում դիսլեքսիայի կանխարգելման, գնահատման, ինչպես նաև՝ հայտնաբերման գործընթացում: Այսինքն՝ չլինելով դիսլեքսիկ, երեխան թողնում է բանավոր կամ գրավոր խոսքի խանգարում ունեցողի տպավորություն, մինչդեռ նա դեռ չի յուրացրել մայրենի լեզվին բնորոշ այն գրաֆիկական համակարգը, որը թույլ է տալիս համարել նրան գրաճանաչ:

Ըստ վերջին տարիների մասնագիտական գրականության ուսումնասիրությունների նախադպրոցականների կարդալու գործընթացի յուրացման համար հիմնականում ուշադրություն էր դարձվում խոսքի զարգացմանը: Կար թյուր կարծիք այն մասին, որ եթե նախադպրոցականն ունի խոսքային խանգարում, ապա նա դիսլեքսիայի նկատմամբ ունի նախատրամադրվածություն: Այդ պատճառով հիմնականում ուշադրություն էին դարձնում այն երեխաներին, ովքեր ունեին այս կամ այն խոսքային խանգարումը (Լ.Ե.Ժուրովա, Գ.Ա.Կաշե, Ա.Վ.Յաստրեբովա): Սակայն, միշտ չէ, որ կարելի է ուղիղ կապ հաստատել բանավոր խոսքի զարգացման մակարդակի և կարդալու գործընթացի հաջող տիրապետման միջև: Դա պայմանավորված է այն կարևոր փաստով, որ դիսլեքսիան պատճառ է հոգեկան բարձրագույն գործընթացների համակարգային խանգարման, որն ընդգրկում է ոչ միայն խոսքային, այլև՝ ոչ խոսքային հոգեկան գործընթացները, տարածական պատկերացումները, ուշադրությունը, ինչպես նաև՝ տառային պրոֆիլի ձևավորման գործընթացը:

Երեխաների՝ դիսլեքսիայի նկատմամբ նախատրամադրվածության հայտնաբերումը թույլ է տալիս իրականացնել կարդալու գործընթացի հիմքում ընկած խոսքային և ոչ խոսքային հոգեկան գործընթացների ուսումնասիրմանն ուղղված հատուկ շտկողական աշխատանք: Այդպիսի աշխատանքները, ըստ մասնագետների, պետք է սկսել 5 տարեկանից: Ըստ Ա.Ն.Կորնևի կարդալու խաթարման ուշ հայտնաբերումը առաջացնում է նշանակալի դժվարություններ և պահանջում է երկարատև շտկողական միջամտություն: Յուրահատուկ դժվարությունների ավելի վաղ բացահայտման և իրականացվող շտկողական աշխատանքի դրական ելքի դեպքում հնարավոր է դառնում կանխարգելել երկրորդական հուզական և վարքի խանգարումները:

Այսպիսով, հատուկ գրականության վերլուծությունը (Ա.Ն.Կորնև, Բ.Գ.Անանև, Ռ.Ի.Լալաևա, Ա.Ռ.Լուրիա, Ա.Ն.Սոկոլով, Գ.Ա.Կաշե, Տ.Գ.Եգորով,

P.Gardner, B.Hornsby, T.R.Miles, P.Ott) թույլ է տալիս կատարել հետևյալ հիմնական հետևությունները.

1. Ընթերցանության յուրահատուկ խանգարման՝ դիսլեքսիայի նկատմամբ հրատապ հետաքրքրությունը պայմանավորված է նախադպրոցական տարիքի երեխաների բանավոր խոսքի խանգարումները ժամանակին կանխարգելելու անհրաժեշտությամբ:

2. Մեր կարծիքով, ընթերցանության ունակության գործընթացի ձևավորմանն արգելակում են մի շարք հոգեկան գործընթացների խանգարումներ, որոնք հանդես գալով միանգամից, կազմալուծում են ընթերցանության ֆունկցիոնալ հիմքը :

3. Ընթերցանության խանգարումները առաջացնում են սովորողների ուսուցման, առաջադիմության լուրջ դժվարություններ և ամբողջապես արգելակում ընդհանուր գիտելիքների լիարժեք յուրացումը, եթե ժամանակին դիսլեքսիան չի բացահայտվում և կանխարգելվում:

4. Գոյություն ունեցող խնդրի լուծման համար անհրաժեշտ է մշակել համալիր ծրագիր՝ երեխաների բանավոր խոսքի ուսումնասիրման և դիսլեքսիայի նկատմամբ ռիսկի խմբի հայտնաբերման աշխատանքներն իրականացնելու համար:

<u>Երկրորդ գլխում՝</u> «Նախադպրոցականների ընթերցանության ֆունկցիոնալ հիմքը կազմող գործընթացների հետազոտության կազմակերպումը» ներկայացված է նախադպրոցական տարիքի երեխաների բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և մի շարք ոչ խոսքային հոգեկան գործընթացների հետազոտության կազմակերպումը, մեթոդները, ստացված տվյալների մշակումը:

Հետազոտությունն, որն իրականացվել է 2006-2008թթ. ուսումնական տարիներին, անց է կացվել Երևան քաղաքի թիվ 166, 278 նախադպրոցական և թիվ 109, 138, 155 հանրակրթական դպրոցների ուսումնական հաստատությունների բազայի հիման վրա: Հետազոտվել են 5-6 տարեկան նախադպրոցականներ, որոնք կազմել են վերոհիշյալ մանկապարտեզների ավագ խմբերի համակազմը և պատրաստվում էին հաճախել հանրակրթական դպրոց: Ընդհանուր առմամբ, հետազոտությանը մասնակցել է 84 երեխա:

Ըստ բժշկահոգեբանամանկավարժական գնահատման փաստաթղթերի հաստատվել է, որ բոլոր երեխաների մտավոր զարգացումը, տեսողությունը և լսողությունը նորմայի սահմաններում են: Հետազոտության սկզբում հետազոտվել է նախադպրոցականների բանավոր խոսքը, խոսքալսողական հիշողությունը և այնպիսի ոչ խոսքային հոգեկան գործընթացներ, որոնք ընկած են ընթերցանության գործընթացի հիմքում: Յուրաքանչյուր երեխայի հետազոտությունն անց է կացվել անհատական՝ նրան ծանոթ միջավայրում, հանգիստ մթնոլորտում:

Հետազոտությունն սկսվում էր երեխայի հետ անցկացվող այնպիսի զրուցի և վստահության գոտու ստեղծմամբ, որը պայմանավորվում էր երեխայի հուզական վիճակի, որոշակի դրդապատճառների, պարապմունքի նկատմամբ հետաքրքրության առաջացնելու, աշխատանքի մեջ ակտիվ ներգրավվելու առկայությամբ:

Հետազոտության ընթացքում օգտագործվում էին այնպիսի խաղային և ուսուցողական հնարներ, որոնք խթանում էին երեխայի գործունեությունը: Ամեն դեպքում, մենք ամբողջ հետազոտությունը չենք կառուցել խաղային բովանդակության հիման վրա, քանի որ երեխայի մտածողությունը ակնառու գործնական մակարդակում կարող էր ունենալ յուրահատուկ ուղղվածություն:

Առաջադրանքների կատարման հրահանգները երեխաներին տրվում էին բանավոր: Դրանք ներկայացվում էին երեքից հինգ համառոտ նախադասությունների օգնությամբ, որոնցից յուրաքանչյուրի ծավալը չէր գերազանցում յոթը բառը: Հանձնարարության պատասխանը նախադպրոցականների կողմից տրվում էր բանավոր, կամ ցուցադրվում էր դրանց գործնական կիրառումը:

Երեխաների բոլոր պատասխանները գրանցվում էին գրավոր հետազոտության արձանագրություններում:

Հետազոտության ստացված արդյունքների վերլուծությունը թույլ տվեց բոլոր հետազոտված երեխաներին բաժանել 3 խմբի.

1-ին խմբում էին ներգրավված այն նախադպրոցականները (47,6%), որոնք չունեին ուսումնասիրվող ցուցանիշների խանգարումներ, նկատվում էր նրանց ընթերցանության գործընթացի ֆունկցիոնալ հիմքի ձևավորվածության բարձր աստիճան: Համաձայն այս տվյալների կարելի է ենթադրել, որ այս խմբի երեխաները պետք է հեշտությամբ տիրապետեին ընթերցանության հմտություններին:

2-րդ խումբը կազմում էր նախադպրոցականների 45,3%-ը, որոնք ցույց տվեցին հետազոտման արդյունքների անհավասարաչափ զարգացում, քանի որ հայտնաբերվեց նրանց ընթերցանության գործընթացի ֆունկցիոնալ հիմքի ձևավորման միջին աստիճանը: Ենթադրվում է, որ այս երեխաները կունենան ընթերցանության գործընթացի ձևավորման դժվարություններ:

3-րդ խմբի մեջ ներգրավվեց նախադպրոցականների 7,1%-ըհետազոտվող ցուցանիշների մեծաքանակ խանգարումներով, որոնք ունեին ընթերցանության ֆունկցիոնալ հիմքի ձևավորվածության ցածր աստիճան: Ենթադրվում է, որ այս երեխաները բավականին դժվար կտիրապետեն ընթերցանության հմտություններին:

Հետագա հետազոտությունները կատարվեցին 2007-2008թթ. ուսումնական տարիներին: Հետազոտությանը մասնակցեցին նույն 84 երեխաները, որոնք այդ պահին ավարտում էին հանրակրթական դպրոցի աաջին դասարանը:

Հետազոտման ընթացքում ուսումնասիրվել է յուրաքանչյուր երեխայի ընթերցանության գործընթացի ձևավորման անհատական աստիճանը: Սա անհրաժեշտ էր բանավոր խոսքի իրական վիճակի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացների աստիճանական ձևավորման բացահայտման համար, ինչը պատկերացում էր տալիս ընթերցանության հմտության զարգացման վերաբերյալ:

<u>Երրորդ գլխում՝</u> «Նախադպրոցականների ընթերցանության հմտության ձևավորման գործընթացի հետազոտության արդյունքների վերլուծություն» բաժնում ներկայացված է հետազոտության արդյունքների վերլուծության ուսումնասիրումը, որը ցույց տվեց հետազոտված բոլոր խմբերի երեխաների վերոհիշյալ գործընթացների ձևավորվածության աստիճանը:

Բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացների հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ տվեց բացահայտել նախադպրոցականների յուրաքանչյուր խմբի բանավոր խոսքի բաղադրամասերի ձևավորման առանձնահատկությունները:

Այսպիսով, ընթերցանության տեխնիկական և իմաստային կողմերի ուսումնասիրությունը հնարավորություն տվեց բացահայտել, որ առաջին խմբի աշակերտների մեծամասնությունը (92,5%) ցուցաբերում էր վերոհիշյալ հատկանիշների ձևավորվածության բավարար աստիճան: Այս փորձարկվողների ընթերցանության առանձին, ոչ յուրահատուկ խանգարումները պայմանավորված էին այն կարևորագույն հանգամանքով, որ տվյալ հմտության կայացման գործընթացը դեռևս վերջնականապես ձևավորված չէր:

Ընթերցանության հմտության վիճակի մասին հետազոտության բոլոր տվյալները հաստատեցին այն փաստը, որ տվյալ ենթախմբի (1Ա) աշակերտները չէին պատկանում դիսլեքսիայի առաջացման ռիսկի խմբին:

Առաջին խմբի սովորողների 7,5%-ն ուներ ընթերցանության տեխնիկական և իմաստային կողմի ձևավորվածության անբավարարություններ: Տվյալ ենթախմբի փորձարկվողները ցուցաբերել էին ընթերցանության ամենատարբեր սխալների նշանակալի քանակ: Սակայն այս աշակերտների 5,0%-ի սխալները կրկնվող և կայուն չէին և, հաճախ, ինքնուրույն ուղղվում էին սովորողների կողմից: Այս դպրոցականները կազմում էին 1Բ ենթախումբը: Նման տվյալները մատնանշում էին այն հանգամանքը, որ 1Բ ենթախմբի աշակերտները պատկանում էին ընթերցանության խանգարման նախատրամադրվածության ռիսկի խմբին:

Մյուս սովորողների (2,5%) ընթերցանության հմտության կայացման դժվարությունները կրում էին կրկնվող կայուն բնույթ, այս դպրոցականները կազմեցին 1Գ ենթախումբը: Ընթերցանության հմտության ձևավորման հիմքում ընկած խոսքային և ոչ խոսքային հոգեկան գործընթացների մանրամասն ուսումնասիրությունը հնարավորություն տվեց հայտնաբերելու, որ առաջին խմբի

փորձարկվողների 2,5%-ը՝ 1Գ ենթախումբն ունի ընթերցանության ֆունկցիոնալ հիմքի ձևավորվածության ցածր աստիճան՝ արտահայտված տարածական պատկերացումների ձևավորվածության անբավարարությամբ: Կարելի է ասել, որ այս աշակերտները ունեն դիսլեքսիա:

Առաջին խմբի մյուս հետազոտվողների այդ ցուցանիշները համապատասխանում էին զարգացման մակարդակին:

Ընթերցանության տեխնիկական և իմաստային կողմերի ուսումնասիրությունը թույլ տվեց բացահայտել երկրորդ խմբի դպրոցականների մեծամասնության (76,4%) տվյալ հմտությունների ձևավորվածության անբավարարությունները:

Ընթերցանության հետազոտության վերոհիշյալ արդյունքները հաստատեցին, որ 2Բ ենթախմբի աշակերտներն ունեին տվյալ հմտության կայացման դժվարություններ և պատկանում էին ընթերցանության խանգարման նախատրամադրվածության ռիսկի խմբին:

2-րդ խմբի առաջին դասարանցիների 23,6%-ը ցուցաբերեց այլ արդյունքներ: Ընթերցանության տեխնիկական և իմաստային կողմերի առանձնահատկությունները մատնանշում էին, որ սովորողների 18,4%-ը՝ 2Ա ենթախումբն ուներ ընթերցանության հմտության նորմալ ձևավորվածություն, իսկ աշակերտների 5,2%-ն, որոնք կազմեցին 2Գ ենթախումբը՝ ուներ դիսլեքսիա: Այսպիսի տվյալները վկայում էին այն մասին, որ 2Ա ենթախմբի աշակերտների (18,4%) համար չհաստատվեց ընթերցանության հմտության կայացման դժվարությունների նկատմամբ ունեցած նախատրամադրվածության առկայությունը:

2Գ խմբի հետազոտվողների 5,2%-ի ընթերցանության հմտության կայացման հիմքում ընկած խոսքային և ոչ խոսքային հոգեկան գործընթացների առանձնահատկությունների մանրակրկիտ ուսումնասիրությունը չհաստատեց դիսլեքսիայի նկատմամբ ունեցած նախատրամադրվածությունը և թույլ տվեց հայտնաբերել նրանց հնչյունային համադրության թերի ձևավորվածության, խոսքալսողական հիշողության, տեսողական ճանաչողության և տարածական պատկերացումների ձևավորվածության անբավարարություն: Բացի այդ, աշակերտների 2,2%-ն ուներ հնչութային ընկալման և քերականական կառույցների խանգարումներ, իսկ մյուսները՝ (3,0 %) խոսքային տարբեր միավորումների վերլուծության հմտության և բառապաշարի զարգացման ցածր մակարդակ:

Նշված յուրաքանչյուր դեպքերում ընթերցանության ֆունկցիոնալ հիմքի ձևավորվածության աստիճանն, ընդհանուր առմամբ, թույլ էր տալիս ենթադրել, որ այս սովորողներն ունեին ընթերցանության հմտության կայացման խանգարում՝ դիսլեքսիա:

Երրորդ խմբի փորձարկվողների (100%) ընթերցանության իմաստային և

տեխնիկական կողմերի ստուգումը թույլ տվեց հայտնաբերել, որ բացի «աճի» սխալներից, այս սովորողները թույլ են տալիս մեծաքանակ կոպիտ սխալներ, որոնք հանդիսանում են «դիսլեքսիկական»:

Փաստորեն, այս սխալները գրանցվել էին ընթերցանության բոլոր խոսքային միավորների ուսումնասիրման ժամանակ և, որպես կանոն, չէին ուղղվել աշակերտների կողմից, դրանք կրում էին կրկնվող կայուն բնույթ:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ընթերցանության գործընթացի համակարգային հետազոտությունը հաստատում է այն ենթադրությունը, որ երրորդ խմբի սովորողները պատկանում են դիսլեքսիայի խմբին:



Նկար 1. Ընթերցանության հմտության ձևավորվածության ամփոփիչ տվյալներ

Բացի փորձարարական խմբից, մեր կողմից ուսումնասիրվվել են նույն շրջանի տարբեր նախադպրոցական հաստատություններ հաճախող ևս 84 երեխաների անձնական փաստաթղթեր, ընդ որում, այդ նախադպրոցականների խոսքի դինամիկ զարգացումը հետազոտվել է փորձարարական խմբին զուգահեռ՝ և մեկ տարի դպրոց հաճախելուց հետո: Մեր կողմից անցկացված ուսումնասիրությունները թույլ տվեցին եզրակացնել, որ ստուգողական խումբը կազմող նախադպրոցականներից շատերն ունեին նախատրամադրվածություն դիսլեքսիայի նկատմամբ և որոշակի տոկոսային հարաբերություն էր կազմում ռիսկի այն խումբը, որն արդեն գրաճանաչության գործընթացում կարող էր գնահատվել որպես ընթերցանության խանգարում ունեցող: Մեր կողմից

կատարված հետազոտությունները բացահայտեցին մեկ այլ հետաքրքիր երևույթ, ըստ որի հանրակրթական և ներառական դպրոցներ հաճախող սովորողներից շատերը, որոնց փաստաթղթերի ուսումնասիրումը նախկինում թույլ էր տալիս կարծել, որ նրանք կարող են ունենալ ընթերցանության տարբեր տիպի խանգարումներ, բայց չէին առանձնացվել որպես ռիսկի խմբի երեխաներ, 6 ամիս կամ մեկ տարի սովորելով վերոհիշյալ դպրոցում, հայտնվել էին Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հ.8 հատուկ կրթահամալիրում, քանի որ նրանց հետ չէր տարվել ոչ մի հետազոտական կամ լոգպեդական աշխատանք: Արդեն այս դպրոցի պայմաններում, ըստ համապատասխան փաստաթղթերի, այս երեխաները գնահատվում էին որպես դիսլեքսիա կամ ԽԸԹ ունեցող երեխաներ:



Նկար 2. Կապակցված խոսքի, բառապաշարի զարգացման ցուցանիշներ



Նկար 3. Բառակազմության և քերականական կառուցվածքի զարգացման ցուցանիշներ



Նկար 4. Խոսքալսողական հիշողության, տեսողական ճանաչողության, տարածական պատկերացումների զարգացման ցուցանիշներ



Նկար 5. Փորձարարական և ստուգողական խմբերի ընթերցանության գործընթացի ձևավորվածության համեմատական վերլուծություն

Ելնելով վերոհիշյալից կարելի է հավաստիացնել, որ եթե ժամանակին այս 84 երեխաների հետ տարվեր այն նույն հետազոտությունը, որը բացահայտում էր բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացների խանգարումը նախադպրոցական տարիքում, ապա նրանք ժամանակին գնահատվելով որպես խոսքային խանգարում ունեցողներ՝ կհաճախեին լոգոպեդական կետեր, կամ էլ համապատասխան հաստատություններում կստանային լոգոպեդական օգնություն, ինչն էլ թույլ կտար կանխարգելել նրանց դիսլեքսիան նախադպրոցական տարիքում:

Ընդ որում, մեր կողմից մշակված այս մեթոդիկան թույլ է տալիս նախադպրոցական տարիքում հայտնաբերել այլ խոսքային խանգարումներ ևս, որոնք ի հայտ են գալիս և առավել վառ արտահայտվում են միայն գրաճանաչության ուսուցման ժամանակ: Չէ որ, մեր կողմից ուսումնասիրված բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացներն ամբողջականորեն ներկայացնում են տվյալ երեխայի լեզվական կարողությունների հնարավորությունները, որոնց թերզարգացումը հաճախ նախադպրոցական տարիքում չի արտահայտվում այս կամ այն պատճառներով:

Այսպիսով, ընթերցանության ձևավորման հիմքում ընկած բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և մի շարք ոչ խոսքային հոգեկան գործընթացների հետազոտման հատուկ մշակված մեթոդիկան կարող է կիրառվել նախադպրոցականների դիսլեքսիայի վաղ հայտնաբերման և կանխարգելման բարդ գործընթացնում:

Հաստատված տվյալները վկայում են այն մասին, որ ընթերցանության հմտության կայացումն ապահովող բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան ֆունկցիաների ուսումնասիրման արդյունքների վերլուծության հիման վրա մեծամասամբ կարելի է հայտնաբերել դիսլեքսիայի առաջացման ռիսկի խումբը, ինչը մատնանշում են հետազոտության կիրառված մեթոդների արդյունքների ուսումնասիրությունները, համաձայն որոնց կարելի է հաստատել ընթերցանության ֆունկցիոնալ հիմքի զարգացման մակարդակի և ընթերցանության գործընթացի կայացման առանձնահատկությունների վիճակագրական նշանակալի կապը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ընթերցանության ֆունկցիոնալ բազիսի ձևավորվածության որոշմանն ուղղված հետազոտության մշակված մեթոդիկան կարող է ծառայել նախադպրոցական տարիքի երեխաների դիսլեքսիայի առաջացման ռիսկի խմբի հայտնաբերմանն ու կանխարգելմանը, ինչը հիմք է տալիս դատելու տվյալ կանխարգելիչ աշխատանքի հոգեբանամանկավարժական արդյունավետության մասին: Մեր կողմից անցկացված հետազոտության շարունակական հեռանկարները անպայմանորեն պետք է հաշվառեն դիսլեքսիայի մեխանիզմների պաթոգենետիկական ուսումնասիրությունը, ինչպես նաև՝ անհատական, տարբերակված մոտեցման հիման վրա, ուղղված լինեն երեխաների ընթերցանության յուրահատուկ խանգարումների կանխարգելմանը:

Անցկացված հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս ձևակերպել հետևյալ հիմնական հետևությունները.

1. Նախադպրոցականների ընթերցանության հիմքում ընկած բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացների համակարգային հետազոտությունը թույլ է տալիս բացահայտել դիսլեքսիայի առաջացման գործոնները:

2. Դիսլեքսիա ունեցող երեխաների մեծամասնության ընթերցանության խանգարումները հավաստում են բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացների համակարգայնությունը:

3. Դիսլեքսիայի կանխարգելման համար անհրաժեշտ է անցկացնել առավել կարևոր ցուցանիշների՝ կապակցված խոսքի, բառապաշարի, բառակազմության, խոսքի քերականական կառուցվածքի, հնչութային ընկալման և վերլուծության, տարբեր խոսքային միավորների վերլուծության,

խոսքալսողական հիշողության, տարածական պատկերացումների և տեսողական ճանաչողության համակարգային հետազոտություն:

4. Ընթերցանության հմտության կայացումն ապահովող բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացների ուսումնասիրման վերլուծության հիման վրա, կարելի է հայտնաբերել դիսլեքսիայի առաջացման ռիսկի խումբը:

5. Մանկավարժական հստակ պայմանները և հետազոտության հատուկ մեթոդիկան թույլ են տալիս հաստատել և որոշել ընթերցանության ֆունկցիոնալ հիմքի զարգացման մակարդակի և ընթերցանության գործընթացի կայացման առանձնահատկությունների նշանակալի կապը:

6. Նախադպրոցականների բանավոր խոսքի, խոսքալսողական հիշողության և ոչ խոսքային հոգեկան գործընթացների հետազոտության հատուկ մեթոդիկան նպաստում է դիսլեքսիայի առաջացման վաղ հայտնաբերմանը և կանխարգելմանը, ինչը թույլ է տալիս իրականացնել նախապատրաստական և համապատասխան միջոցառումներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՑՈԼՎԱԾ Է ՀԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

1. Գրիգորյան Ա.Գ. Կարդալու պրոցեսը որպես գրավոր խոսքի ձև, նրա հոգեֆիզիոլոգիական մեխանիզմի վերլուծությունը, «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» գիտամեթոդական ժողովածու, Երևան 2006, N5, էջ 10-12:

2. Գրիգորյան Ա.Գ. Սովորողների ընթերցողական կարողության ձևավորման և բանավոր խոսքի խաթարման փոխկապակցվածությունն ու արտահայտման ձևերը, «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» գիտամեթոդական ժողովածու, Երևան 2007, N6, էջ 4-7:

3. Գրիգորյան Ա.Գ. Դիսլեքսիա ունեցող նախադպրոցականների խոսքալսողական հիշողության և ոչ վերբալ հոգեկան ֆունկցիաների ուսումնասիրություն, «Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ասպիրանտների հայցորդների և գիտաշխատողների 53-րդ գիտաժողովի նյութերի» ժողովածու, Երևան 2008, էջ 88-90:

4. Հովյան Գ.Ռ., Գրիգորյան Ա.Գ. Դիսլեքսիայի նկատմամբ նախատրամադրվածության հայտնաբերումը որպես նախադպրոցական տարիքի երեխաների բանավոր խոսքի խանգարումների կանխարգելման և շտկման հիմք, «Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ասպիրանտների հայցորդների և գիտաշխատողների 53-րդ գիտաժողովի նյութերի» ժողովածու, Երևան 2008, էջ 85-87:

5. Գրիգորյան Ա.Գ. Գրավոր և բանավոր խոսքի խանգարումների շտկման

առանձնահատկությունները ներառական դպրոցում «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես» Երևան 2008, N3, էջ 81-89:

6. Գրիգորյան Ա.Գ. Մտավոր հետամնաց երեխաների գրավոր խոսքի խանգարումներ շտկման առանձնահատկությունները «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» գիտամեթոդական ժողովածու, Երևան 2009, N8, էջ 25-28:

7. Գրիգորյան Ա. Գ., Հովյան Գ.Ռ Ընթերցանության խանգարումների ուսումնասիրման առանձնահատկությունները ժամանակակից լոգոպեդիայում ժողովածու՝ «Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ասպիրանտների հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի» Երևան 2010, էջ 110-112:

8. Գրիգորյան Ա. Գ. Դիսլեքսիայի նկատմամբ նախատրամադրվածության հայտնաբերումը նախադպրոցական տարիքում /Գորիսի Պետական Համալսարանի միջազգային 2-րդ գիտաժողովի աշխատանքների ժողովածու/ Գորիս 2011, էջ 568-572:

ГРИГОРЯН АСТГИК ГАВРУШОВНА

ПРОФИЛАКТИКА ДИСЛЕКСИИ У ДОШКОЛЬНИКОВ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.03 - “Специальная педагогика”

Защита диссертации состоится 28-ого февраля 2013г., в 14^{oo} на заседании специализированного совета по педагогике 020 ВАК «Педагогика» при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Меца, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Согласно новому закону РА об обучение общеобразовательной государственной системе (14.04.1999г.) с 2006 года в

школах Армении введено 12-летнее. В учебные заведения поступают дети, которым исполнится 6 лет до конца текущего года (31 декабря включительно). Для шестилетнего ребенка учеба в школе является новой и сложной деятельностью, для преодоления которой требуется достаточное развитие ряда высших психологических процессов. Навыки чтения играют важную роль для человека, его психического развития, а также обеспечивают общеобразовательную подготовку в деле формирования личности (Р. Беккер, А.С. Выготский, Т.Г. Егоров). В связи с этим более актуальной становится профилактика дислексии – нарушения процесса чтения - у детей дошкольного возраста.

Цель исследования. Создание научно обоснованной комплексной методики, направленной на профилактику дислексии у детей дошкольного возраста.

Задачи исследования. Изучить устную речь, слухоречевую память и неречевые психические функции у детей дошкольного возраста, входящих в группу наиболее подверженных риску возникновения дислексии. Проанализировать взаимосвязь устной речи, слухоречевой памяти и неречевых психических функций со степенью формирования навыка чтения. Разработать научно обоснованную комплексную методику, направленную на изучение устной речи, слухоречевой памяти и ряда неречевых психических функций с целью профилактики дислексии у детей дошкольного возраста.

Научная новизна исследования. Научно обоснован комплексный подход к проблеме выявления предрасположенности к дисклексии у дошкольников. Выявлена и доказана корреляционная связь между уровнем развития у детей устной речи, слухоречевой памяти, ряда неречевых психических функций и успешностью овладения ими навыков чтения. Обнаружены и представлены отличительные особенности формирования устной речи, слухоречевой памяти и ряда неречевых психических функций, лежащих в основе процесса чтения у дошкольников с разной степенью предрасположенности к дислексии. Разработана и предложена балльная оценка уровня развития компонентов устной речи, слухоречевой памяти и неречевых психических функций у детей дошкольного возраста,

способствующая определению степени сформированности функциональной основы чтения.

Теоретическая значимость исследования. Поставлена и исследована проблема комплексного подхода к профилактике дислексии у дошкольников в соответствии с современным пониманием особенностей формирования процесса чтения. Расширены теоретические представления о патогенетических механизмах дислексии, что способствует разработке более эффективных приемов диагностики, предупреждения, коррекции и профилактики дислексии.

Практическая значимость исследования. Изменены и апробированы методы обследования речевых и неречевых психических функций у дошкольников, что обусловливает повышение эффективности профилактику дислексии. Результаты исследования нашли применение в логопедической практике дошкольных и школьных образовательных учреждений и могут быть использованы в диагностических целях, в учебном процессе студентов педагогических ВУЗов, в дальнейших научных исследованиях, направленных на выявление речевых нарушений у детей дошкольного и младшего школьного возраста.

Содержание исследования. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы, приложения и актов о внедрении результатов исследования в педагогическую практику. По теме диссертации опубликовано восемь статей.

GRIGORYAN ASTGHIK GAVROUSH

PREVENTION OF DYSLEXIA AMONG PRESCHOOL CHILDREN

Thesis for getting a candidate degree in Pedagogical Sciences, specialty 13.00.03 “Special Pedagogy.”

The thesis defense will be held on 28 of February, 2013 at 14:00 at the meeting of the Specialized Pedagogical Committee 020 HAC for granting scientific degrees at Armenian State Pedagogic University after Kh. Abovyan (address: 17 Tigran Mets Str., 0010 Yerevan).

SUMMARY

The relevance of the research. In accordance with the new Law of General Education (14.04.1999) since 2006 the duration of the secondary education in Armenia has been twelve years. Children turning six before the 31st of December inclusively enter into schools. For a six-year-old child, studying at school is a new and challenging activity, to overcome which a sufficient development of a number of higher psychological processes is required. Reading skills are important for an individual, his mental development, and they also provide a general education background for personality development (R.Bekker, A.S.Vygotsky, T.G.Yegorov). That is why it is becoming increasingly important to prevent dyslexia – a reading disorder, among preschool children.

The aim of the research. The aim of this study is to devise a comprehensive scientific program which will be directed towards prevention of dyslexia through the study of oral speech, aural-oral memory and a number of non-verbal mental functions among preschool children.

The objectives of the research. The peculiarities of developing of oral speech, audio-verbal memory and several verbal cognitive functions responsible for reading skills formation of risk group children with dyslexia.

The scientific novelty of the research. A complex approach to the issue of detection of predisposition to dyslexia among preschool children is scientifically

substantiated. Distinctive features of development of a number of oral speech, aural-oral memory and non-verbal mental functions underlying the functional basis of reading are detected and presented among preschool children with different dyslexic levels. An evaluation system of the development of components of oral speech, aural-oral memory and a number of non-verbal mental functions helping to determine the dyslexic children's level of functional bases of reading is worked out and presented.

The theoretical importance of the research. The issue of a complex approach towards the prevention of dyslexia is posed and studied in accordance with modern understanding of peculiarities of the reading process development. Theoretical understanding of pathogenetic mechanisms of dyslexia is expanded which contributes to the development of more effective methods of diagnosis, detection, correction and prevention of dyslexia.

The practical importance of the research. Methods of examination of verbal and non-verbal mental functions in preschool children are modified and tested, which increases the effectiveness of their implementation towards the prevention of dyslexia. The results of the study of dyslexia prevention have found application in the practice of speech therapy in pre-schools and schools. The research materials can be used for diagnostic purposes in the educational process of pedagogical universities, in further scientific research aimed at studying speech disorders in pre-school and primary school children.

The structure of the research. The thesis consists of the introductory part, three chapters, references, appendix and acts of implementation of study results into the pedagogical practice. Nine articles have been published on the subject of the thesis.